ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՋԱՓՆՅԱԿ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ

«03» 07 2020թ.
№ 28/64697

ք. Երևան, Ա. Սարգսյան 5
Էլ.փոստ՝ ajapnyak@yerevan.am
հեռախոս՝ +374 11 51 80 50

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԿ ՆԱԽԱԳԱՀ
Շ. ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր 30.06.2020թ. թիվ 345-55 գրության /գր. բանալի՝1808290/՝ տեղեկացնում ենք, որ

1. Երևան քաղաքի 2020թ. բյուջեի Աջափնյակ վարչական շրջանի մասով նախատեսված շուրջ 18625.0/տասնութ միլիոն վեց հարյուր քսանհինգ հազար/հազ. դրամ մշակութային, սոցիալական և մարզական միջոցառումներ հետաձգվել են, ինչպես նաև 26846.0/քսանվեց միլիոն ութ հարյուր քառասունվեց հազար/հազ. դրամ սոցիալական ծրագրեր չեղարկվել են COVID-19-ով պայմանավորված իրավիճակի պատճառով:

2. 2020թ. հուլիսի 1-ի դրությամբ վարչական շրջանը համայնքային բյուջեից COVID-19 համավարակի հետ կապված միջոցառումների իրականացման նպատակով կատարել է շուրջ 1584.0/մեկ միլիոն հինգ հարյուր ութսունչորս հազար/հազ. դրամի ծախսեր, որոնցից՝ 564.460/հինգ հարյուր վաթսունչորս հազար չորս հարյուր վաթսուն/ հազ. դրամով ձեռք է բերվել ալկոգել, բժշկական դիմակներ, հակաբակտերիալ գել, բժշկական ձեռնոցներ:

-120.0/մեկ հարյուր քսան հազար/հազ. դրամ ծախսվել է վարչական շենքի ախտահանման աշխատանքների համար

-900.0/ինը հարյուր հազար/ հազ. դրամ տրամադրվել է սուբսիդիա բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին՝ համատիրություններին, շենքերի ախտահանումների և կանխարգելիչ գործողությունների համար:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ այսուհետև տեղեկատվություն ստանալու համար Ձեր հարցումները ուղղեք Երևանի քաղաքապետարան:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Թ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

կատարող՝ Ռ.Աբրահամյան
հեռ. (011)51-80-36